


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

**ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և
բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)**

	2004թ. հունվար		Ընդհանուրի նկատմամբ, %	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2003թ. հունվարի նկատմամբ, %	2004թ. հունվար	2003թ.
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	60961.0	110.4	100.0	100.0
այդ թվում՝				
մանրածախ ապրանքաշրջանառություն	44861.5	109.7	73.6	73.3
բնակչությանը մատուցված ծառայություններ	16099.5	114.3	26.4	26.7

**ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը
մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները**
(ընդհանուրի նկատմամբ %)



2004թ. հունվարին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 10.4% աճ՝ 2003թ. հունվարի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով: Ընդ որում, դրանում 0.3 տոկոսային կետով ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը:

Մանրածախ առևտուր


2004թ. հունվարին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 44861.5 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 9.7%-ով: 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 36.2%:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2004թ. հունվարին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը ընդհանուրի նկատմամբ, %
Ընդամենը	44861.5	100.0
<i>այդ թվում</i>		
խանութներ	26745.4	59.6
հանրային սնունդ	422.0	0.9
սպառողական ապրանքների շուկաներ	10850.0	24.2
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1563.8	3.5
կրպակներ	5280.3	11.8

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2004թ. հունվարին

(ընդհանուրի նկատմամբ %)



2004թ. հունվարին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 95.6% (42875.7 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2004թ. հունվարին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 10850.0 մլն. դրամ:


ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի, 2004թ. հունվարին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	9887.1	10.4	89.6
Արագածոտն	5.0	-	100.0
Արարատ	51.8	-	100.0
Արմավիր	220.8	19.9	80.1
Գեղարքունիք	88.0	17.0	83.0
Լոռի	290.4	55.5	44.5
Կոտայք	133.8	13.1	86.9
Շիրակ	17.0	-	100.0
Սյունիք	29.7	-	100.0
Վայոց ձոր	9.2	-	100.0
Տավուշ	117.2	23.8	76.2
Ընդամենը ՀՀ	10850.0	13.9	86.1

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2004թ. հունվարին, կազմել է 86.1%:

**ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության
ընդհանուր ծավալն ըստ ՀՀ մարզերի**

(ընդհանուրի նկատմամբ %)



2004թ. հունվարին 2003թ. հունվարի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 0.3 տոկոսային կետով:

2004թ. փետրվարի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 41794.0 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 62 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվարին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 3.5% կամ 1563.8¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:


Բնակչությանը մատուցված ծառայություններ

2004թ. հունվարին հանրապետությունում, ըստ ծառայություններ մատուցող կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 16099.5 մլն.դրամ, որը 2003թ. հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 14.3%-ով:

Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 243.3 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 29.0%-ով:

2004թ. հունվարին 2003թ. հունվարի համեմատ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.7% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (11.4%), փոստային և հեռահաղորդակցության (4.3%), մշակույթի (18.9%), զբոսաշրջության և էքսկուրսային (1.2%), առողջարանների և հանգստյան տների (3.7%) ծառայությունների սակագների հավելաճով: Կրթության, կենցաղային, բնակարանային-կոմունալ տնտեսության ծառայությունների սակագները նվազել են համապատասխանաբար 1.5, 0.6 և 0.4%-ով:

Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը 2004թ. հունվարին
(ընդամենի նկատմամբ %)



2004թ. հունվարին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել մարդատար տրանսպորտի (5592.6մլն.դրամ) և բնակարանային-կոմունալ տնտեսության (4074.5 մլն. դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 34.7 և 25.3 %:

2004թ. հունվարին խաղատների ծառայությունների ծավալը կազմել է 149.4մլն.դրամ կամ բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 0.9%-ը: Բնակչությանը մատուցված համակարգչային ծառայությունների ծավալը կազմել է 7.4 մլն. դրամ: